# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԻՎ 62-Լ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վարսեր Կարապետյանի 27.08.2014թ. գրավոր առաջարկը,

նկատի ունենալով ՀՀ, Կոտայքի մարզի հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության հանգամանքը,

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

1. Պալատի նախագահի 28.02.2014թ. թիվ 62-Լ որոշման հավելվածի 5-րդ և 9-րդ բաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| **հ/հ** | **Մարզը** | **Նստավայր** | **Հաստիքների քանակը** | **ՀՊ-ների քանակը** | **Դատարանի նստավայրը** |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 5. | **Կոտայք** | Հրազդան 1<br>Աբովյան 2<br>Եղվարդ 0.5 | 3.5 | 4 | **Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Աբովյան** |
| 9. | **Լոռի** | Վանաձոր<br>Ալավերդի 0.5 | 3.5 | 4 | **Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի** |

2. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**27 օգոստոսի 2014թ.**
**թիվ 307-Լ**
**ք.Երևան**